

ԼՈՒՐԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

1982 թ. Մոսկվայում կայացած միջեկեղեցական ու միջկրոնական խաղաղության համաժողովից հետո յուրաքանչյուր տարի Ռուսաց Պատրիարքարանի նախաձեռնությամբ տեղի է ունենում խաղաղությանը նվիրված ժողով՝ «Կլոր սեղան» անվանումով, որի նշանաբանը 1982 թ. ժողովի գինաթափման կոչն է հանուն խաղաղության: Ամեն անգամ, ըստ օրվա պահանջների, կազմվում է ժողովի գործունեության ծրագիրը:

Այս տարի ևս, մարտի 18—20 օրերին, Մոսկվայում տեղի ունեցավ հերթական խաղաղության համաժողով՝ «Կլոր սեղան», «Ընդհանուր անվտանգությունը և բարոյական արժեքները» թեմայով: Ժողովին մասնակցում էին շուրջ հարյուր ներկայացուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Սույն ժողովի նախագահն էր Հնդիկ Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Նորին Սրբություն Պողոս Մար Գրիգորին: Վերոհիշյալ ժողովին Հայաստանյայց Եկեղեցին ներկայացնում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Ժողովի ընթացքում քննարկվեցին զանազան միջազգային-քաղաքական հարցեր, քննադատվեցին ռազմական մրցավազքն ու աստղային պատերազմի ծրագրերը: Ժողովի ընթացքում բարձր գնահատվեցին ՍՍՀՄ կառավարության խաղաղասիրական քայլերը:

Հավարտ ժողովի կազմվեց «Կոմյունիկե» և Երկիր մոլորակի խաղաղությունը պաշտպանելու վերաբերյալ կոչեր հղվեցին ՍՍՀՄ կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռեյգանին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դ'Կուելյարին: